

ԵԿԵՔ ԼԻՆԵՆՔ ՆՐԱ ՊԵՍ

Ես ըմկերացա նրա հետ, երբ առաջին անգամ սկսեցի քառեր արտաքերել: Նա ամուր կառչեց ինձանից՝ առանց անգամ մտածելու, որ կարող է հեռանալ, և առանց կասկածելու իմ՝ նրանից հեռանալու:

Ես առա նրան իմ մեջ՝ առանց հասկանալու, թե ով է նա: Տարիներ անցան, ել ավելի կապվեցի նրա հետ, իսկ նրա՝ ինձ հետ ունեցած կապվածությունը մնաց անփոփոխուն. նա, անշուշտ, առանց ինձ չի կարող ապրել:

Որքան մեծացա, այնքան ավելի լավ հասկացա, թե ինչ է նա իրենից ներկայացնում... Նա այն է, ում պետք ենք ես ու դու օդ ու ջրի պես, և նույնին էլ նա է մեզ պետք... Չե, չի կարող նա առանց մեզ:

Նա ես եմ, ես նա եմ, դու նա ես, նա դու է: Նա իմ ու քո

մայրենի լեզուն
է, իսկ ես ու դու
մեր մայրենի լե-
զուն ենք: Լեզուն
առանց մեզ իր
կյանքը չի պատ-
կերացնում, եկեք
լինենք մեր լեզուի
պես:

Սիրանուշ
ԱՊԱՅԱՆ
Լրագրություն
3-րդ կուրս



ԴԱՅՐԵՆԻՔԻՆ ԳՈՎԱՍԱՆՔԵՐԵՐ ՊԵՏՔ ԶԵՆ, ԳՈՐԾԵՐ ԵՆ ՊԵՏՔ



Պատերազմում բոլորս ենք մեռնում, այն ո՞վ է ասել, թե այսքան կամ այնքան մարդ մահացավ: Պատերազմում մենք բոլորս ենք մեռնում. մայրը մեռնում է ինչ-որ ժամանակ, երբ լսում է, որ որդին է մահացել, քոյլը մեռնում է, երբ լսում է, որ հայրը վիրավոր է, հաշմանդամ տղան մեռնում է, երբ իրեն առանց ոտքերի է տեսնում, կինը մահանում է, երբ լսում է, որ ամուսինը գերի է ընկել, տատիկը տես-նում է իր առյուծ որդու դիակը. և ի՞նչ է դա, եթե ոչ մեռմել:

Պատերազմում բոլորս ենք մեռնում, ուղղակի նրանք են, որ չեն վերադառնում, նրանք են, որ չեն երևում, նրանց նկարների դիմաց է, որ մոն ու ծաղիկներ կան, իսկ մենք, մենք նի կերպ խելքի ենք գալիս, վերածնվում Աստծո հոյսով ու հավատով սկսում նորից քայլել սովորել: Պատերազմում մենք բոլորս են մի պահ մահ ենք ապրում ու այսօր

ծաղիկ ենք խոնարիում մեր բոլորիս մահերի հիշո-
ղությունն է, մենք նրանց անվարտ գործերի շա-
րունակությունն ենք, նրանք զիկվել են և ամեն լավ
գործ, որ պետք է անեին, բողել են մեզ: Մենք բոլորս
պիտի ավելի շատ սիրենք միմյանց նրանց փոխա-
րեն, ժպտանք ու սովորենք նրանց փոխարեն, զա-
նանք և կառուցենք նրանց փոխարեն և, ինչն ամե-
նակարուն է, հավատանք ու ապրենք նրանց փո-
խարեն: Սա է հայրենասիրությունը, եկեք ժպտանք
ու կառուցենք մեր հայրենիքը, ոչ թե երեսպաշտու-
թյամբ զինվորի կենաց խնենք, հետո հարբած հայ-
ինյենք իրար, այլ արդրենք ու օգնենք միմյանց:

Նրանք իրենց բացակայությամբ ավելի շատ բան
սովորեցրին, քան ոմանք իրենց ներկայությամբ:
Թող նրանց օրինակը մեզ դաս լինի ոչ թե մարդ
սպանելու, այլ մարդ ապրեցնելու համար: Ցեղա-
պան պատերազմում մենք բոլորս, ովքեր ապրում և
գործում ենք մեր այս մի թիգ հայրենիքում, փոկվել
ենք իրաշքով, թե սովորական քաղաքացի, թե զին-
վորական. մեծ է Աստծո ողորմությունը և մենք ճա-
նապարհ ունենք անցնելու, ապրել է պետք: Եթե
խնայողությամբ ցանես, խնայողությամբ էլ կին-
ծես: Հայրենիքին մեծ-մեծ գովասանքներ պետք չեն,
հայրենիքին գործեր են պետք, հստակ քայլեր,
որոնք տանում են դեպի զարգացում:

Սարիամ ԱՍՐՅԱՆ, աշխարհագրություն 3-րդ կուրս



«Քո Ժամանակը»

ԱՐՁԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՎԱԾԻ
ՈՒՍՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՐՅԱՆ
Հանդիպ պատասխանառու՝
Համայնքային Արդարական
լրագրություն 3-րդ կուրս
Մեր հասցեն՝ Ա.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպարանական՝ 400
Տպագովում է Արցախի
պետական համալսարանի
իրատարակչության
տպարանում
Մեր հասցեն՝ Ա.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսմել մի ժողովրդի
ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
գարեգին նժոյեց

ՀՅՈՒԿԱՐ-ՓԵՏՐՎԱՐ
2021

Քո Ժամանակը

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՎԱԾԻ ՈՒՍՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍՈՎՈՐԵՑՐԵՑ ԷԼ ԱՎԵԼԻ ԳՆԱՅԱՏԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի առաջին իսկ պահից ԱրՊԴ տղա ուսանողները, կիսատ թողնելով բոլոր պարապմունքները, շտապեցին առաջնա-գիծ՝ իրենց նպաստը բերելու հայրենիքի պաշտպանությամբ: Այդ առաջիններից մեկը «Լրագրություն» 4-րդ կուրսի ուսանող Դայկ Ավանեսյանն է, ում հետ պատերազ-մական օրերի, զգացողությունների մասին գրուցել է Մամե Գարիելյանը:

- Դայկ, երբ իմացար, որ պատերազմ է սկսվել Արցախում, ո՞րն էր քո առաջին քայլը:

- Սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան, պա-տերազմը սկսելուն պես շտապեցի մորս և փոքր եղբորս նկուղ իջեցնել: Այնուհետև շտապեցի Ստեփանակերտի զինկոմիսարիատ, այնտեղից ինձ ուղարկեցին պալիտ... Մանե, պալիտին անունը մոռացալն (ժպ-տում է, պալիտ-Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի շենք): Ժամը 10-ին մենք շարժվեցինք դեպի Եղնիկների գորամաս:

- Պատերազմի ընթացքում ամենաշատը ո՞ւմ և ինչի՞ մասին էիր մտածում:

- Պատերազմի ընթացքում ամենաշատը մտածում էի իմ հարազատների մասին: Քանի որ կապի խնդիր կար, և երկար ժամանակ չէի կարողանում կապվել հարազատներին հետ, անընդհատ մտածում էի, թե այդ պա-հին ինչ է կատարվում Ստեփանակերտում, ինչպես է հարազատներիս վիճակը: Քանի որ հայրս նույնպես պատերազմի առաջին իսկ օրը մեկնել էր առաջնագիծ, անընդհատ փորձում էի ինչ-որ կերպ տեղեկություն իմանալ նրա մասին, բայց ոչ մի կերպ չէր ստացվում: Ստածում էի կատարվածի հետևանքների մասին, թե ինչպես պետք է լինի ապագայում: Առաջին իսկ օրվանից պարզ էր, որ այս պատերազմը տարրերվում է ապրիլյանից իր մասշտաբներով, և օրե-ցոր տեսմելով մեր տարրածքային և մարդ-կային կորուստները՝ հարց էր առաջանում: Մորավը վերջը ո՞նց պետք է լինի:

- Ի՞նչ զգացողություններ են քեզ



յեմբերի 9-ի համաձայնագրի ստորագրման լուրը լսելու պահին. կարողանու՞մ են հա-մակերպել այդ ամենի հետ:

- Լուրը լսելով՝ չեմ կարողանում բնու-թագում, թե ինչ զգացողություն էր մոտս, որովհետև մի կողմից աննկարագրելի դժ-վար էր համակերպել այն մտքի հետ, որ հանձնում ենք այն տարածքները, որոնք միշտ եղել են հայկական, որի վրա հայ զին-վորի արյունն է բափված, իսկ մյուս կողմից տեսմելով, թե ինչպես էր իրավիճակը օրե-ցոր բարդանում և գնալով ինչքան էր զոհե-րի թիվը շատանում, ցանկանում էր, որ օր առաջ պատերազմը ավարտվի, բայց առանց հայկական հողերը հանձնելու:

- Ի՞նչ դրական հիշողություններ են քեզ հետ բերել սահմանից:

- Դրական հիշողություններ պատերազմից չունեն: Դրական կարող է մի համարել միայն նոր ընկերներ ծնոր բերելը:

- Ի վերջո, պատերազմը ի՞նչ փոխեց քո կյանքում և ի՞նչ սովորեցրեց քեզ:

- Պատերազմը սովորեցրեց էլ ավելի գնահատել այն, ինչ ունեմ: Փոխեց ապա-գայի հանդեպ ունեցած պլաններս, փոխեց տրամադրությունս:

- Մաղրում ենք քեզ և բոլորիս հաջողու-թյուններ:

Դարցագրույց՝ Մամե Գարիելյանի,
լրագրություն 4-րդ կուրս

ԹԵՐԹԵԼՈՎ 44 ԷԶԱՆՈՑ ՕՐԱԳԻՐԸ



Էլուարացին, որ արևն իր շողերը նոր էր դուրս հանում, որ երկինքը ջինջ ու պարզկա էր, մենք չէինք էլ կարող պատկերացնել, որ այդ հանգստությունը մի վայրկյանում անհետ կկորչի, քաղաքի տարբեր մասերում կփլվեն շենքերը, ու մենք, մեր կամքից անկախ, արտասվող աքքերով ու տագնապահար սրտով, կիեռանք հայրենիքից:

Պատերազմ էր սկսվել Արցախ աշխարհում...Չարաբաստիկ լուրն իմանալուն պես մենք ապաստան գտանք նկուղներում, բայց թշնամին այնքան էր հարվածում հայրենիքի տարբեր սահմաններին, որ փակ ականջներով, միկանույն է, լսում էինք այն անտանելի ծայները: Վախից կույտ էինք եկել նկուղի սառը պատերի տակ ու Աստծուց միայն մի բան էինք խնդրում.

-Տե՛ր Աստված, աղազում եմ, դադարեցրու այս անիջալ պատերազմը, չեմ ուզում մեռնել, ապրել եմ ուզում:

Ու այսպես, աղոթքը մեր շուրթերին պահած,

պաշտպանվում էինք անագորույն թշնամու գենքերից արձակված հարվածներից: Անցնում էին րոպեներ, դադարում էին ծայները, սակայն վախը դեռ մեր սրտերում էր, իսկ վախի ու սարսափի հետ մեկտեղ մեզ ուղեկցում էր այն միտքը, որ հայոց սահմանին այդ պահին կանգնած է հայրենասիրությամբ ու հայրենիքի արժանի գավակ լինելու վեհ գաղափարով դաստիարակված հայ գինվորը: Մենք հավատում էինք մեր

քաջարի, տասնութ-քսան տարեկան մեր առյուծասիրտ տղաների բազկի ուժին, քանզի մեկ անգամ չեմ, որ նրանք ապացուցել են, որ հայրենիքի պաշտպանությունն ու փրկությունը վեր է սեփական մատադ կյանքից:

Մենք ստիպված հեռացանք մեր սեփական տնից, այն համոզմունքով, որ պատերազմը մի քանի օր է տևելու, ու նորից վերադառնալու ենք հայրենի օջախները: Բայց արի ու տես, որ պատերազմը չէր դադարում, պատերազմը չէին դադարեցնում, իսկ սահմանին անմահանում էին մեր տղաները՝ իրենց կյանքի գնով փորձելով պահել հայրենիքից մի թիզ հող: Մեկը վիրավորվում էր ու վիրավոր ծեռքով կամ ոտքով առաջ շարժվում, երկրորդը նետվում էր վիրավոր ընկերոջը փրկելու, իսկ երրորդը, իր հերթը չհասած, վազելով մտնում էր տանկը, որ պայքունի մեկ հարվածով ոչնչացնի անկուշտ թշնամուն. մարտական ոգին անասելի բարձր էր: Ահա այսպես օրերն անցնում էին, որ օրի մարտերը թեժանում էին, մեր տղաները հերոսանում էին՝ թշնամական անօդաչուներ ու մարտական տեխնիկա ոչնչացնելով, և, ցավոք, իրենց կյանքի գնով մեզ պաշտպանելով: Ամեն անգամ սահմանից մի լավ լուր լսելուն պես մեզ հույս էինք տալիս, որ ամեն բան լավ է լինելու, որ հայրելու ենք, որ տուն ենք վերադառնալու՝ գրավյալ նոր տարածքներով: Սակայն այլ պատկերներ ու գույներ էին ստանում այն րոպեները, երբ լսում էինք մեր տղաներից որևէ մեկի մահվան լուրը. չեմ, նրանք չէին մահանում, նրանք անմահանում էին...

Մենք 44 օր շարունակ անքուն գիշերներ էինք անցկացնում, արտասվում, ծիծաղում, տիսրում ու ուրախանում...Պատերազմից հետո Արցախում այսօր կյանքը շարունակվում է, այն փորձում է հայրել մահին...միայն թե մեր տղաները մեզնից չհեռանային:

Կարոտն ուղղակի ճմլում է մեր հոգին...
**Մանե Գաբրիելյան, լրագրություն 4-րդ
կուրսի ուսանողութիւն**

ԻՄ ԱՂՈԹՔ - ՄՐՄՈՒՆ ՄԱՅՐԵՆԻ

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ակադեմիկոս Ս. Արքահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը հայտարարել էր «Լազվագույմ ստեղծագործող» անվանակարգով շարադրությունների մրցույթը: Մրցույթում հաղթող է ծանաչվել «Դայոց լեզու և գրականություն» 2-րդ կուրսի ուսանողութիւն Տարեկի Ղահրամանյանի աշխատանքը:

Դավերժությամբ բյուրեղացած լեռներս ծայնիդ ամբարված արձագանքներն են հնչեցնում եկեղեցու անդուլ դողանջող զանգերի պես: Մատուռն առանց զանգի մատուռ չեմ: Հնչյուններդ ցնցում են լեռները, փարզում ժայռեղեն դեմքին և օժում նրանց հայկականությամբ:

-Այբ-բեն-գին,-հնչում է ծայնդ դարերից եկած օրիներգի պես: Արքմնության շնչով երգեր են հյուսում երկնքից փրկություն աղերսող: Դու երգից աղոթք են դառնում, աղոթքից՝ երգ...

Ամեն սերնդի հետ մի նոր առյուս ես ագուցում հիմնաքարիդ: Պատեր օրեցօր հղվում են, որ հանկարծ ժամանակի ուժը ծաքեր չքողնի նրանց վրա, մռայլ քամիններից չմերկանաս, օտար պատերի չսեղմվես՝ սերտաճելով նրանց: Հէ՞ որ դու անարիկ ամրոց ես:

Իմ արիական լեզու, ծննդյան օրվանից, երբ աչքերս իրենց բաժին լույսով աշխարհը տեսան, դու սրտի լույսը դարձար՝ աշխարհը ճանաչելու: Դու իմ օրոցքում մորս փաղաքուց շշունջները քեզ ծուլեցին հոգուս, սրտիս շնչորը դարձրին հայրենիքս ի սրտե երգեր ծոնելու համար: Օտար լեզունները ժեփորների պես խուլ են, համրացնում են սիրտս: Դու ես օրորոցային կարոտս, մանկական հեթաքանակ շունչը, իմ ամենօրյա աղոթք-մրմունջն առ Աստված:

Դայ շինական ամեն անգամ իր բահը հողին խրելիս քեզնով է օրինել հայրենիքը, խոսել հարազատ հողի հետ: Դունձի ժամանակ արդար քրտինքը սրբելիս քո հնչյուններով հառաչել է հայ մարդը, օրինել բերքը հյութեղեն քո բառերով: Իրենց առաջին սիրո խոսքերը տղաները քո բառերով են հյուսել աղբյուրից սափորներով ջուր լցնող երկարածամ աղջիկների համար: Շառաչուն աղբյուրի ջուրը հնչյուններով քրցում է ամեն անգամ ամբարելով սի-

րո քաղցր որիկ խոսքը: Դու հողի ու հունձքի, կարոտի ու սիրո լեզու են ու ես: Զնշում մարդու օտար հորի հզի գոնան:

Ենից քաղցր հնչյուններդ զգվում են դեպի հայրենիք՝ անհայրենիքը մնացած թշվար սրտերից: Տարերդ եռում են հայ պանդուխտի շուրթերին, օտար ափերում երկնքից փրկություն աղերսող: Դու երգից աղոթք են դառնում, աղոթքից՝ երգ...

Ամեն սերնդի հետ մի նոր առյուս ես ագուցում հիմնաքարիդ: Կոմիտասի երգերը լսելիս ծայնդ ծարավակից այրվող հոգու պես հայերեն կանչում է հայրենիքը: Կոմիտասի երգերում քո ջինջ աղերսներն են...

Ավաղ, դու նաև կրունկի կանչ ես՝ օրեցօր ստվարացող երամի կարուտարազ ելեւջ, լալահառաչ իրաժեշտ:

Դու մարմին ես արնում միայն հայրենիքում, քեզնով են քարելս խոսում, ծանծաղ գետերն աղմկում: Նվազ սրտի արնաքամ վերքերը քեզնից ագահորեն վերցված փշուրներով են ամոքվում: Օտար լեզուններով ինչպես սփոփել, ինչպես լացել հայերեն:

Ավաղ, որդուն պատերազմ ուղարկող մոր արցունքախառն հեկեկան ես, կովի դաշտում վիրավոր եղբորը սիրտ տվող ուժ, անմահացող զինվորի վերցին մրմունջ...

Դու ազգի երկունքն ես, և քո մահն ազգի վախճանն է: Ուրիշ ո՞ր լեզվով են մեր պատմությունն ավանդելու, օտար լեզվով՝ են նոր էջեր գրվելու: Դու միաբանության գլխարկու երակն ես, որ անվերջ սնուցում է ազգիս սիրտը, բարախեցնում, անվերջ բարախեցնում:

Ապրին, լեզուս, որ ազգիս սիրտը ժամանակի արեստական բարքերով չփոխեն: Ապրին, որ ապրենք հայերեն...

Տարեկի Ղահրամանյան

Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս

